# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հուլիսի 7-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԿԾԿԾԻԳ-ՀԲՄԱՊՁԲ-25/8**

ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀ-ի կարիքների համար ցանցային համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԾԿԾԻԳ-ՀԲՄԱՊՁԲ-25/8 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Հրավերի Հավելված 1.1-ով ներկայացված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՐ*»-ում անհրաժեշտություն է առաջացել 13-րդ և 18-րդ կետերով նախատեսված փողրակների պաշտպանական աստիճանը փոփոխել և ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Հրավերի Հավելված 1.1-ով ներկայացված «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՐ*»-ում 13-րդ և 18-րդ կետերով նախատեսված փողրակների պաշտպանական աստիճանը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.

13-րդ չափաբաժին՝Փողրակ (короб) լարերի փակման համար.

«Պլաստիկ մալուխուղի՝ սպիտակ գույնի, առնվազն 90±10x50±10 մմ գծային հատույթով, բաժանարար էլեմենտի  և գործարանային անկյունների պարտադիր առկայությամբ: Առնվազն 90±10x50±10  հատույթը անհրաժեշտ է  տեղեկատվական մալուխների մոնտաժման պահանջվող անկյունների  պահպանման համար, ինչպես նաև փողրակում ներտեղադրվող ցանցային և էլեկտրական վարդակների տեղադրման հնարավորություն ապահովելու համար: IP 40 պաշտպանական աստիճանով / փոշու և խոնավության պաշպանության աստիճան/: Պատրաստված ISO 9001:2000 և EN 50085-2-1 հակահրդեհային  ստանդարտներին համապատասխան: Հավաքածուն ներառում է՝ բաժանարար էլեմենտ (սեպարատոր), համապատասխան անկյունային միացուցիչներ (ներքին, արտաքին, հորիզոնական, կարի քողարկիչ, ճակատի քողարկիչ և ուղղահայաց դետալներ՝ ըստ անհրաժեշտության):»,

18-րդ չափաբաժին՝Փողրակ տեսախցիկների և WiFi ցանցային մալուխների փակման համար.

«Պլաստիկ մալուխուղի՝ սպիտակ գույնի, առնվազն 15x10 մմ գծային հատույթով, բաժանարար էլեմենտի  և գործարանային անկյունների պարտադիր առկայությամբ: IP 40 պաշտպանական աստիճանով / փոշու և խոնավության պաշպանության աստիճան/: Պատրաստված ISO 9001:2000 և EN 50085-2-1 հակահրդեհային  ստանդարտներին համապատասխան: Հավաքածուն ներառում է՝ համապատասխան անկյունային միացուցիչներ (ներքին, արտաքին, հորիզոնական, կարի քողարկիչ, ճակատի քողարկիչ և ուղղահայաց դետալներ՝ ըստ անհրաժեշտության)»:

**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Առաքելյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 05)

Էլ. փոստ՝ a.arakelyan@promotion.am

Պատվիրատու՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Կրթական ծրագրերի կենտրոն» ԾԻԳ ՊՀի